ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 342.1. Դատավորների միջև համակարգչային ծրագրի միջոցով իրականացվող գործերի բաշխման գործընթացին ապօրինի միջամտելը

1. Դատավորների միջև համակարգչային ծրագրի միջոցով իրականացվող գործերի բաշխման գործընթացին միջամտելը՝ բաշխման արդյունքներին վերաբերող տվյալները փոփոխելու նպատակով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ մինչև երկու տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) պաշտոնատար անձի կողմից պաշտոնեական դիրքն օգտագործելով,

3) շահադիտական դրդումներով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից չորս տարի ժամկետով:

Հոդված 342.2. Ներման խնդրագրի վերաբերյալ տվյալների հրապարակումը

Մինչև ներում շնորհելը կամ ներման շնորհելը մերժելու հրամանագրի հրապարակումը տուժողի կամ տուժողի իրավահաջորդի կողմից ներման խնդրագրի վերաբերյալ տվյալների հրապարակելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով:»: